



USAID
FROM THE AMERICAN PEOPLE



**TRANSPARENCY
INTERNATIONAL**
anticorruption center



**ENGAGED
CITIZENRY**
RESPONSIBLE
GOVERNANCE



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՉԱՇԽԱՏՈՂ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԱՃԹՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

«ՄԵԳՈ ԳՈՒԴ» ՍՊԸ, ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹՈՒԽՄԱՆՈՒԿԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն հաշվետվությունը պատրաստվել է «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի կողմից իրականացվող «Չաշխատող հանքարդյունաբերական ընկերությունների պատասխանատվությունը ԱՃԹՆ գործընթացում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է ԱՄՆ ՄԶԳ-ի (USAID) աջակցությամբ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում:

1. Ընդհանուր տեղեկատվություն հանքավայրի, Ընկերության և ազդակիր համայնքի վերաբերյալ

Թուխմանուկի ոսկու հանքավայրը գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզի Մելիքյուղ համայնքի վարչական տարածքում: Ընկերությունը 2016-2020թթ. արդյունահանում, իրացում, արտահանում չի իրականացրել:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 16.12.2016թ.օրինական ուժի մեջ մտած վճռով «Մեզո Գոլդ» ՍՊԸ-ն ճանաչվել է սնանկ՝ ի բավարարումն Պետական եկամուտների կոմիտեի հայցի: Ընկերությունը բողոքարկել է այդ վճիռը: 2017թ-ի հուլիսի 4-ին ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը բավարարել է Ընկերության բողոքը և բեկանել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 16.12.2016 թվականի թիվ ԵԿԴ/0339/04/16 վճիռը¹: Այս տարիներին ընթացել են տարբեր բնույթի՝ դատավճիռների բողոքարկման, պարտատերերի ցուցակի հաստատման/ճշգրտման, վերաքննիչ դատական գործընթացներ և, ի վերջո, Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանի դատավորը, վերանայելով «Մեզո-Գոլդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սնանկության գործի բոլոր նյութերը, իր 19.12.2019թ. որոշմամբ սնանկ ճանաչված «Մեզո Գոլդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ սկսել է լուծարման վարույթ: Այդ որոշմամբ հանձնարարվել է սնանկության կառավարիչին «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածով սահմանված կարգով արգելանք դնել «Մեզո Գոլդ» ՍՊԸ-ի՝ սեփականության իրավունքով պատկանող գույքի և դրամական միջոցների վրա և կասեցնել «Մեզո Գոլդ» ՍՊԸ-ի գործունեությունը²:



Նկար 1, 2. «Մեզո Գոլդ» ՍՊԸ-ի գործարանի տարածք

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների (ՏԿԵ) նախարարի 05.11.2019թ. թիվ 548-Ա հրամանով «Մեզո Գոլդ» ՍՊԸ-ի նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ: Այդ վարույթի հիմքով նախարարի 13.12.2019թ. թիվ 693-Ա

¹ <file:///C:/Users/User/Desktop/II%20EIT%20project2020-2021/Trip%20to%20Aragatsotn04.12.2020/Report/case-1.htm>

² <file:///C:/Users/User/Desktop/II%20EIT%20project2020-2021/Trip%20to%20Aragatsotn04.12.2020/Report/case-3.htm>

հրամանով դադարեցվել է «Մեզո Գոլդ» ՍՊԸ-ի՝ Արագածոտնի մարզի Թուխմանուկի ոսկու հանքի կենտրոնական տեղամասի 28.12.2012թ. ՇԱԹՎ-29/184 ընդերքօգտագործման իրավունքը, լեռնահատկացման ակտը և լուծվել է ընդերքօգտագործման 28.12.2012թ. ՊՎ-184 պայմանագիրը: Հրամանը բացակայում է նախարարության կայքում:

Համաձայն ՀՀ ՏԿԵ նախարարության կայքի³ տվյալների՝ 2021թ. հունվարի 14-ի դրությամբ նախարարի 13.12.2019թ. թիվ 693-Ա հրամանը բողոքարկվել է Ընկերության կողմից:

«Մեզո Գոլդ» ՍՊԸ-ին պատկանող Թուխմանուկի ոսկու հանքավայրի կենտրոնական տեղամասի ընդերքօգտագործման թույլտվության համարն էր ՇԱԹՎ-29/184 28.12.2012թ., շահագործման թույլտվության ժամկետը՝ 28.12.2012թ. մինչև 21.07.2040թ., հատկացված հանքավայրի մակերեսը՝ 25,99 հա, հանքաքարի հաստատված պաշարը՝ հանքաքար՝ 21918,3 հազ.տ, ոսկի՝ 28463,38 կգ, արծաթ՝ 74,21տ, տարեկան արդյունահանման թույլատրելի ծավալը՝ 1-ին տարում՝ 120,0 հազ. տ, 2-4 տարում՝ տարեկան 150,0 հազ. տ, 5-րդ տարում՝ 180,0 հազ. տ, 6-րդ տարում՝ 300,0 հազ. տ, 7-25 տարում տարեկան 1100,0: հազ. տ:

Ընդերքօգտագործման պայմանագրում 2015 թվականի օգոստոսի 24-ին կատարվել են ընդերքօգտագործման իրավունքի փոփոխություններ՝ կապված հանքավայրի կորդիինատների փոփոխության, հանքաքարում ազնիվ մետաղների պարունակության, ինչպես նաև հանքաքարի տարեկան արդյունահանման թույլատրելի ծավալների հետ:

ՇՄԱԳ ԲՓ 93 11.12.2014թ. փորձագիտական եզրակացությունը բացասական է:

Ըստ Հայաստանի Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (այսուհետ՝ ԱՃԹՆ) կայքի⁴

- Ընկերությունը 2016-2019թթ. արդյունահանում, իրացում, արտահանում չի իրականացրել:
- 2016-2019թթ. ազնիվ, գունավոր, սև և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար պետական տուրք՝ 10,0 մլն. դրամը չի վճարել:
- Նույն կայքի համաձայն՝ Ընկերությունում 2016թ., 2017թ. և 2018թ. զբաղվածների թիվը կազմել է համապատասխանաբար 23, 19, 20 մարդ, որից 8-ը Մելիք գյուղից:

Ազդակիր համայնք ՀՀ Արագածոտնի մարզի Մելիք գյուղի վերաբերյալ

Գյուղն ունի 368 տնտեսություն՝ 1270 բնակչով: Տղամարդիկ՝ 583, կանայք՝ 687: Բնակչության մեջ մինչաշխատունակ տարիքի բնակիչները կազմում են 33%,

³ <http://www.mtad.am/hy/mtad27.12/>

⁴ <https://reports.eiti.am/hy/>

աշխատունակները՝ 54%, հետաշխատունակները՝ 13%: Ունի դպրոց 135 աշակերտով, բուժքույր: Չունի բուժկետ, կապի հանգույց, գրադարան և մանկապարտեզ:

Տնտեսության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն է: Գյուղատնտեսական հողահանդակներն օգտագործվում են գլխավորապես որպես արոտավայրեր, վարելահողեր, խոտհարքեր: Արոտավայրերը զբաղեցնում են 1019 հա, մոտ 90 հա՝ վարելահողեր, խոտհարքեր՝ 70հա: Արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների մակերեսը կազմում է 22,6 հա:

Գյուղի բնակիչները զբաղվում են դաշտավարությամբ, բանջարաբուստանային, կերային կուլտուրաների մշակությամբ, պտղաբուծությամբ, խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությամբ, մեղվաբուծությամբ, թռչնաբուծությամբ:

Ներկայումս մշակում են գարի, ինչը ոռոգում չի պահանջում: Ոռոգման ջուրը բավարարում է միայն կարտոֆիլի դաշտերին:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում է բնակչության սոցիալական անապահով վիճակը, երիտասարդության արտագաղթը, աշխատատեղերի բացակայությունը, ցածր աշխատավարձերը, միջհամայնքային և արոտավայրեր տանող ճանապարհների անմխիթար վիճակը, խմելու ջրի անբավարար որակը, ոռոգման ջրի անբավարարությունը, համայնքում բուժհաստատության, մանկապարտեզի, գյուղատնտեսական մթերքների իրացման շուկայի բացակայությունը:

Համավարակի և պատերազմական իրավիճակում համայնքում ծագել են սոցիալ-տնտեսական նոր խնդիրներ, մասնավորապես, ըստ համայնքապետի, համայնքից պատերազմ մեկնածներին համայնքապետարանը հատկացրել է 50,0 հազարական դրամ գումար: Պատերազմի հետևանքով համայնքը չի տվել զոհեր, սակայն 9 հոգի ստացել է վիրավորում, ում բուժման և բնականոն կյանքի վերադարձի համար նրանց ընտանիքներից կպահանջվեն խոշոր գումարներ:

Ունեն Արցախի Հանրապետությունից տեղահանված 7 փախստական ընտանիք, ամեն ընտանիքի համայնքապետարանը հատկացրել է 50,0 հազարական դրամ գումար:

Համայնքում համավարակի թելադրանքով ճանապարհների փակման և հույսի ներկրման խոչընդոտի պատճառով փակվել է բնական աղամանդի վերամշակմամբ զբաղվող ձեռնարկությունը, և այնտեղ աշխատող բնակիչները մնացել են գործազուրկ: Համավարակի հետևանքով մի քանի ընտանիք հիվանդացել և ապաքանվել է:

Հեռավար կրթության կազմակերպման համար պահանջվող համակարգչային տեխնիկայի ձեռքբերման, ինտերնետային կապի դիմաց վճարումների անհրաժեշտությունը համայնքի բնակիչների շրջանում առաջացրել է նոր ֆինանսական ծախսեր:

«Մեզո Գուղ» ՍՊԸ-ի իրական սեփականատերերի մասին

ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կայքում ներկայացված հայտարարի⁵

⁵ <https://www.e-register.am/am/companies/1294443/beneficiary.pdf>

համաձայն՝ Ընկերությունը գրանցվել է 11.12.2000թ., 100% մասնակցային չափով հանդիսանում է միջազգային ԱՄՆ «JI-JI-CI-AR-MAYNING» իրավաբանական անձ:

Որպես N1 իրական սեփականատեր գրանցված է ԱՄՆ քաղաքացի Իան Հագուն, ով աշխատում է «FIEBIRD MENEJMENT» ՍՊԸ-ում: Ընկերությունում նրա մասնակցության տոկոսը 45,6% է՝ 168589 բաժնետոմս, ձեռք է բերել 27.02.2018 թվականին:

Որպես N2 իրական սեփականատեր գրանցված է ՀՀ քաղաքացի Արմեն Միքայելյանը, ով «Մեգո Գոլդ» ՍՊԸ-ի գործադիր մարմնի ղեկավարն է և համատեղության կարգով աշխատում է նաև «Մարջան Մայնինգ Քոմփանի» ՍՊԸ-ում: Նրա բաժնեմասի վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է կայքում:

N1-ի իրական սեփականատիրոջ համար որպես ցուցակված բաժնետոմսերով միջանկյալ իրավաբանական անձ է նշվում ԱՄՆ «ԳԼՈԲԱԼ ԳՈԼԴ ՔՈՆՓՈՐԵՅՇՆ» կազմակերպությունը, որի ցուցակման տվյալում նշված է «PACIFIC STOCH TRANSFER COMPANI» ֆոնդային բորսան /տնօրեն՝ Վան Կրիկորյան/:

Միջանկյալ իրավաբանական անձը կազմակերպության կանոնադրական կապիտալում ունի անուղղակի մասնակցության իրավունք և նշված անուղղակի մասնակցությունն իրականացնում է «Գլոբալ Գոլդ Մայնինգ»/ԱՄՆ/ և «ՋԻ-ՋԻ-ՄԻ-ԱՌ ՄԱՅՆԻՆԳ»/ԱՄՆ/ իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում ուղղակի մասնակցության միջոցով:

2. «Մեգո Գոլդ ՍՊԸ-ի ստանձնած պարտավորություններն՝ ըստ 28.12.2012թ. ՊՎ-184 ընդերքօգտագործման պայմանագրի

2.1. Սոցիալական պարտավորություններ

28.12.2012թ. ՊՎ-184 ընդերքօգտագործման պայմանագրում թվային առումով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերին մասնակցության կոնկրետ պարտավորություններ չեն նշված, բացի համայնքի սոցիալական ծրագրին մասնակցության ընդհանուր դրույթների:

2.1.1 Համայնքների նկատմամբ ստանձնած պարտավորությունների փաստացի կատարողականը

Քանի որ Ընկերությունն ընդերքօգտագործման պայմանագրով ստանձնած սոցիալական պարտավորություններ չունի, ոչ մի հատկացում համայնքին չի կատարել: Ծրագրի շրջանակներում կատարած այցի ընթացքում սակայն համայնքապետը նշեց, որ դպրոցին տարիներ առաջ Ընկերությունը նվիրել է համակարգիչներ:

2.2 Բնապահպանական պարտավորություններ

Ընդերքօգտագործման պայմանագրով «Մեգո Գոլդ» ՍՊԸ-ն պարտավորվել է.

1. Ապահովել ընդերքի, մթնոլորտի, հողի, անտառների, ջրերի, ինչպես նաև շինությունների և այլ կառույցների պահպանությունն ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից:
2. Ապահովել բնության, պատմամշակութային հուշարձանների պահպանությունն ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից:
3. Ապահովել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացությամբ նախատեսված պայմանները:
4. Նախագծի և օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի համաձայն՝ վերականգնել և բարելավել ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողամասեր (ռեկուլտիվացիա), ինչպես նաև դրանք պիտանի դարձնել տնտեսության մեջ օգտագործման համար, կամ բերել անվտանգ վիճակի:
5. Ապահովել օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար նախատեսված վճարի վճարումը:

2.2.1 Բնապահպանական պարտավորությունների փաստացի կատարողականը

Համայնք այցելության ընթացքում արձանագրվեց, որ Ընկերությունը չի ապահովել ընդերքի, մթնոլորտի, հողի, անտառների, ջրերի, ինչպես նաև շինությունների և այլ կառույցների պահպանությունն ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից:

Ընկերությունը չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար նախատեսված վճարի վճարումը՝ խախտելով Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի և ընդերքօգտագործման պայմանագրի պահանջները:

Համայնքապետը պոչամբարների և ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողամասերի ռեկուլտիվացիայի չկատարումը բացատրեց նրանով, որ Ընկերությունը, ոսկու կորզման նպատակով նախատեսել էր կատարել այնտեղ կուտակված արտադրական թափոնների վերամշակում: Դա նշանակում է, որ այդ տարածքները երկար տարիներ այլ նպատակներով տնտեսության մեջ օգտագործելու հնարավորություն չի ստեղծվի, ինչն ինքնին պայմանագրային պարտավորությունների խախտում է:



Նկար 3. Թուխմանուկի հանքի պոչամբար

Ըստ համայնքի ղեկավարի, քանի որ Ընկերությունը հանքավայրի շահագործման սկզբնական շրջանում չէր պահում նախագծային տեխնոլոգիաները, հանքաքարի արդյունահանման վայրից հանքային ջրերը խառնվում էին համայնքի ոռոգման համակարգին և աղտոտում էին կարտոֆիլի ցանքաստարածությունները: Պոչամբարը տեղադրվել էր խմելու ջրագծին մոտ: Ըստ նրա՝ հետագայում այդ սխալները շտկվել են:

Արտադրական լցակույտերից առ այսօր շարունակվում են փոշու արտանետումները:

2.3 Հանքի փակման գործողությունների և ֆինանսական երաշխիքների մասին

28.12.2012թ. ՊՎ-184 ընդերքօգտագործման պայմանագրում չեն ամրագրվել հանքի փակման միջոցառումների և հանքի փակման ծրագրի իրականացման ֆինանսական երաշխիքների մասին հավելվածը, ինչը ՀՀ կառավարության 2012 թվականի մարտի 22-ի N 437-Ն որոշման պահանջների խախտում է: Միաժամանակ, Ընդերքօգտագործման հայտի քննարկման գործընթացում չեն պահանջվել հանքի փակման ծրագիրը, ինչը Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի գ) ենթակետի խախտում է:

3. Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքում⁶ հրապարակված «Մեզո Գոլդ» ՍՊԸ-ի ընդհանուր ֆինանսական հաշվետվությունում ներկայացված տվյալները

Տվյալ	2016 թ.	2017 թ.	2018թ.
Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի	0	0	

⁶ <https://reports.eiti.am/hy/report/search/company-pdf/>

խտանյութ			
Շահութահարկ, դրամ	Հաշվ.՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0
Եկամտային հարկ, դրամ	Հաշվարկված՝ 29704343, Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 29921617 Վճարված՝ 0	Հաշվետու տարվա համար հարկային հաշվարկով (հայտարարագրո վ) հաշվարկված՝ 18087858, վճարված՝ 0 Հաշվանցված՝ 0
Ավելացված արժեքի հարկ, դրամ	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0
Ակցիզային հարկ, դրամ	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0
Ռոյալթի, դրամ	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0
Բնօգտագործման վճար, դրամ	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0
Բնապահպանական վճարներ, դրամ	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0
Բնապահպանական վճարներ (մաքսային), դրամ	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0
ՇԹ Պետտուրք, դրամ	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0
ՇՄՊ դրամագլուխ, դրամ	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0
Մշտադիտարկումների իրականացման վճար, դրամ	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0
Գույքահարկ (Մելիք գյուղ), դրամ	Հաշվարկված՝ 157400, Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 1574 00, Վճարված՝ 0	Երևան՝ Հաշվարկված՝ 122200 դրամ Վճարված՝ 0
Հողի հարկ	Հաշվարկված՝ 0	Հաշվարկված՝ 0	Հաշվարկված՝

(Մելիք գյուղ), դրամ	Վճարված՝ 0	Վճարված՝ 0	35200 դրամ, Վճարված՝ 0
Վարձակալություն (Հողամաս), դրամ	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0
Վարձակալություն (Անշարժ գույք)	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0
Վարձակալություն (փոխադրամիջոց)	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0
Մոց.-տնտ. պարտավորություն (Մելիք գյուղ)	Ըստ պայմանագրի չունի և ոչինչ չի կատարել	Ըստ պայմանագրի չունի և ոչինչ չի կատարել	Ըստ պայմանագրի չունի և ոչինչ չի կատարել
Բարեգործական հասկացումներ (Մելիք գյուղ)	Չի կատարել	Չի կատարել	Չի կատարել
Ոչ ֆինանսական օգնություն	Չի ցուցաբերել	Չի ցուցաբերել	Չի ցուցաբերել
Տուգանք, դրամ	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0
Աշխատատեղեր, մարդ	23	19	20 մարդ, որից 8-ը Մելիք գյուղից
Անհատույց օտարումներ	Չի կատարել	Չի կատարել	Չի կատարել

4. Ընկերության և պետական մարմինների կողմից ԱՃԹՆ շրջանակներում ներկայացված տարեկան հաշվետվությունների համեմատական վերլուծություն 2016թ., 2017թ. և 2018թ-ի համար

2016թ. ՏԿԵ նախարարության հաշվետվության մեջ⁷ նշված է, որ Ընկերությունը Երևանում 258988 դրամ գույքահարկը չի վճարել, սակայն այն արտահայտված չէ Ընկերության՝ այդ թվականի հաշվետվությունում, իսկ Մելիք գյուղում վճարվելիք գույքահարկի չափը ցույց է տրված 35200 դրամ, մինչդեռ Ընկերության հաշվետվությունում՝ 157400 դրամ:

2017թ. ՏԿԵ նախարարության հաշվետվության⁸ մեջ նշված է, որ Երևանում Ընկերությունն ունի 381188 դրամ գույքահարկի ապառք, սակայն այն արտահայտված չէ Ընկերության նույն թվականի հաշվետվությունում, իսկ Մելիքգյուղում վճարվելիք գույքահարկի չափը ցույց է տրված 35200 դրամ, որն Ընկերության հաշվետվությունում նշված է 157400 դրամ:

⁷ <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2016&state-body=2>

⁸ <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2017&state-body=2>

2018 թ. ՏԿԵ նախարարության հաշվետվության⁹ մեջ նշված է, որ Երևանում ունի 487664 դրամի գույքահարկի ապառք, սակայն այն Ընկերության այդ թվականի հաշվետվությունում այն կազմում է 122200 դրամ: Մելիք գյուղում վճարվելիք գույքահարկի չափը ՏԿԵ նախարարության հաշվետվությունում ցույց է տրված 35682 դրամ, իսկ Ընկերության հաշվետվությունում՝ 35200 դրամ:

2016թ. ՀՀ շրջակա միջավայրի նախարարության (ՇՄՆ) հաշվետվության¹⁰ մեջ որպես շրջակա միջավայրի դրամագլխի բազային չափ նշվում է 3070670 դրամ, և տվյալ տարվա համար վճարման ենթակա և չվճարված գումարի չափը՝ 435000 դրամ, մինչդեռ Ընկերության նույն տարվա հաշվետվության մեջ այդ մասին գրառումները բացակայում են:

2017թ. ՇՄՆ հաշվետվության¹¹ մեջ որպես շրջակա միջավայրի դրամագլխի բազային չափ նշվում է 3070670 դրամ, և տվյալ տարվա համար վճարման ենթակա և չվճարված գումարի չափը՝ 435000 դրամ, մինչդեռ Ընկերության այդ տարվա հաշվետվության մեջ այդ մասին գրառումները բացակայում են:

2018 թ. ՇՄՆ հաշվետվության¹² մեջ որպես շրջակա միջավայրի դրամագլխի բազային չափ նշվում է 3070670 դրամ, և տվյալ տարվա համար վճարման ենթակա և չվճարված գումարի չափը՝ 435000 դրամ: Ընկերության այդ տարվա հաշվետվության մեջ այդ մասին գրառումները բացակայում են:

2016թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) ԱՃԹՆ հաշվետվության¹³ մեջ նշվում է, որ այդ տարի Ընկերությունը վճարել է 2500000 դրամ եկամտահարկ, մինչդեռ Ընկերության հաշվետվության մեջ նշվում է, որ չի վճարել: Նույն հաշվետվության մեջ նշվում է, որ Ընկերությունը 2015թ., 2016թ. պետական տուրքի վճարման ուշացման համար ենթարկվել է 1389277 դրամ վարչական տուգանքի և 2016թ. եկամտային հարկի ուշ վճարման համար 10853023 դրամ վարչական տուգանքի, սակայն Ընկերության 2016թ-ի հաշվետվությունում այդ թվերը բացակայում են:

2017թ. ՊԵԿ-ի հաշվետվության¹⁴ և Ընկերության հաշվետվությունների մեջ տարբերություններ չկան: Տարբերություններ չկան նաև 2018թ. հաշվետվությունների¹⁵ միջև:

Հաշվետվությունների վերլուծությունից պարզվում է, որ Ընկերությունը հաշվետվությունների լրացման նկատմամբ ցուցաբերել է կրավորական կեցվածք, և որ

⁹ <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2018&state-body=2>

¹⁰ <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2016&state-body=1>

¹¹ <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2017&state-body=1>

¹² <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2018&state-body=1>

¹³ <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2016&state-body=3>

¹⁴ <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2017&state-body=3>

¹⁵ <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2018&state-body=3>

ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ն պետք է մշակի հաշվետվությունների հավաստիության աուդիտի մեխանիզմներ:

5. «Մեզո Գոլդ» ՍՊԸ-ի կողմից Մելիքյուղի համայնքային բյուջեին կատարած վճարումները 2016, 2017, 2018 թվականներին

- 2016թ., 2017թ. և 2018թ. չի վճարել տարեկան հաշվարկային 157400 դրամ գույքահարկը:
- 2016թ., 2017թ. և 2018թ. Մելիքյուղ համայնքին չի վճարել հողամասի վարձակալության վճար:
- 2016թ., 2017թ. և 2018թ. Մելիքյուղ համայնքին չի վճարել հողի հարկ:
- Հողամասերի, փոխադրամիջոցների վարձավճարներ ոչ մի տարի չի կատարել:
- Ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորություններ նախատեսված չեն եղել:
- Ընդերքօգտագործողի կողմից 2016-2018թթ համայնքին կատարած բարեգործական հատկացումներ, նվիրատվություններ կամ այլ ձևով համայնքին կատարված անհատույց օտարումներ չեն կատարվել:

6. Ընկերության կողմից 2016, 2017, 2018 թվականներին շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին, մշտադիտարկումների համար, բնապահպանական և բնօգտագործման վճարների և պետական տուրքերի վճարումների մասին

- Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի (բազային՝ 3070670 դրամ) համալրում չի կատարել ոչ մի տարի:
- Մշտադիտարկումների իրականացման վճար ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից չի սահմանվել, հատկացումներ այդ տարիների համար չեն կատարվել:
- Բնապահպանական և բնօգտագործման վճարներ չեն հաշվարկել և չեն վճարվել:
- Ազնիվ, գունավոր, սև և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար սահմանված 10,0 մլն. դրամ պետական տուրքը ոչ մի տարի չի վճարվել:

7. Բնապահպանական վճարների նպատակային օգտագործման, մասհանումների և ծրագրերի վերաբերյալ

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ 2016թ-2019թթ. Մելիքյուղ համայնքը որևէ սուբվենցիայի գումար չի ստացել, քանի որ «Մեզո Գոլդ» ՍՊԸ-ն մինչև 2019թ-ն ընդգրկված չի եղել օրենքի 1-ին հոդվածում նշված կազմակերպությունների ցանկում:

8. Համայնքային զարգացման ծրագրերում «Մեզո Գոլդ» ՍՊԸ-ի ներգրավվածության մասին

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի պաշտոնական կայքում¹⁶ տեղադրված Մելիքգյուղ համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագրում¹⁷ համայնքի զարգացման ծրագրային ուղղությունների մեջ նշված են բնակչության սոցիալական վիճակի բարելավումը, համայնքում գյուղատնտեսության զարգացումը, նոր աշխատատեղերի ստեղծումը: Համայնքում նախատեսվող միջոցառումներից կարևորվում է աղբահանության և աղբի տեսակավորման գործընթացների կազմակերպումը, փողոցներում ծառատունկի իրականացումը, համայնքի կանաչապատ տարածքների ընդարձակումը և համայնքի բնակչության ներգրավումը բնապահպանական խնդիրների լուծման գործընթացին՝ հասարակական կազմակերպությունների հետ պարբերական սեմինարների անցկացման, դասընթացների, տեսագովազդների, ցուցանակների և հանրային իրազեկման ճանապարհով: Ըստ զարգացման ծրագրի՝ համայնքն ակնկալում է միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների համագործակցության շրջանակներում իրականացնել ոռոգման համակարգի վերանորոգում, մանկապարտեզի և մշակույթի տան վերանորոգում: Որպես համայնքի զարգացման խոչընդոտ՝ դիտարկված են համայնքային բյուջեի սղությունը նախանշված ծրագրերի իրականացման համար, հատուկ ուշադրության է արժանացել շենքերի և շինությունների ոչ սեյսմակայուն լինելու փաստը, պարզագույն թաքստոցների, քաղաքացիական պաշտպանության միջոցների բացակայությունը: «Մեզո Գոլդ» ՍՊԸ-ի հետ կապված ակնկալիքներ հիշատակված չեն համայնքի զարգացման ծրագրի համաֆինանսավորման, կամ որևէ այլ կարգի օժանդակություն ստանալու տեսանկյունից: Այսինքն, Ընկերությունը ներգրավված չէ համայնքի զարգացման ծրագրերում:

9. Այցելությունների արդյունքում հարցումների վերլուծություն

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ն «Մեզո Գոլդ» ՍՊԸ-ի Թուխմանուկի ոսկու հանքավայրի կենտրոնական տեղամասի և հանքաքարի վերամշակման ենթակառուցվածքներին ազդակիր Մելիքգյուղ համայնքի ղեկավարի և բնակչության շրջանում 2020 թվականի դեկտեմբերին անցկացրեց հարցում՝ սոցիալական, շրջակա միջավայրի և առողջապահության հարցերի վերաբերյալ՝ նպատակ ունենալով պարզել բնակչության իրազեկվածության մակարդակը, նրանց գնահատականները և կարիքները, ինչպես նաև նրանց դիրքորոշումը Թուխմանուկի ոսկու հանքավայրի կենտրոնական տեղամասի հանքավայրի շահագործման հարցերում, լսել նրանց առաջարկներն առկա բնապահպանական խնդիրների լուծման վերաբերյալ:

¹⁶ <http://aragatsotn.mtad.am/zargacman/>

¹⁷ <http://aragatsotn.mtad.am/files/docs/25302.pdf> Գոլդմանուկում է

Հարցմանը մասնակցել է 18 անձ՝ 11 կին և 7 տղամարդ: Հարցման արդյունքների գերակշիռ մասն արտահայտված են սույն հաշվետվության նախորդ բաժիններում, իսկ մյուս մասի արդյունքների վերլուծությունը ներկայացվում է ստորև՝



Նկար 4, 5. ԷկոԼուրի հարցումները Մելիքյուղի համայնքապետարանում և դպրոցում

- Ընդերքօգտագործման պայմանագիր կնքելիս՝ համայնքը չի ներգրավվել Ընկերության սոցիալական պատասխանատվության հարցերի քննարկման գործընթացին և չի արտահայտել իր դիրքորոշումը պայմանագրի կնքման ժամանակ:
- Մելիքյուղ համայնքի ղեկավարը և հարցմանը մասնակցած բնակիչները դրական են տրամադրված հանքավայրի շահագործման հարցում՝ դրա մեջ տեսնելով աշխատատեղերի բացման հնարավորություններ և իրենց սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման ճանապարհը: Սակայն գտնում են, որ անհրաժեշտ է, որպեսզի հանքավայրը շահագործող Ընկերությունը պահպանի շրջակա միջավայրի պահպանման և բնական ռեսուրսների օգտագործման համար օրենքով սահմանված բոլոր նորմերը:
- Հանքավայրը շահագործող Ընկերությունն, ըստ հարցվածների, անպայման պետք է հաշվի առներ համայնքի կարիքները և դրանց լուծմանն ուղղած սոցիալական պատասխանատվությունն ամրագրեր հանքավայրի շահագործման պայմանագրում:
- Ըստ համայնքապետի՝ 2016 թվականից «Մեգո Գոլդ» ՍՊԸ-ն համայնքի 226 հա մակերեսով տարածքի վարձակալության դիմաց սահմանված տարեկան գումարային 45,0 մլն. դրամ վարձավճարը չի վճարել: Վարձավճարի գանձման հայցով համայնքապետարանը դիմել է դատարան: Այդ հայցի մասին տեղյակ է սնանկության կառավարիչը: Համայնքի ղեկավարը հանդիպել է Ընկերության նոր տնօրենի հետ: Ըստ համայնքի ղեկավարի՝ նոր տնօրինությունը մշակում է հանքավայրի արդյունահանման առողջացման ծրագիր: Պատրաստվում են համայնքապետարանի հետ կնքել պայմանագիր, որտեղ կամրագրվեն համայնքի

նկատմամբ ստանձնած սոցիալական պարտավորությունները և պարտքերի մարման ժամանակացույցը:

- Հարցվածները կարծում են, որ հանքարդյունաբերությունից բացի համայնքի զարգացման ուղիներից են նաև էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական կուլտուրաների մշակումը, անասնապահության զարգացումը, որին էլ, սակայն, խոչընդոտում է համայնքային բյուջեի սղությունը, արտավայրեր տանող ճանապարհների անբարեկարգ վիճակը, պետական աջակցության փոքր ծավալները, ինչպես նաև ոռոգման ջրի պակասը:
- Ըստ հարցվածների պատասխանների՝ շրջակա միջավայրի աղտոտվածության և իրենց առողջական վիճակի հնարավոր կապի մասին հիմնականում բավարար չափով իրազեկված չէին: Այդ հարցը, բոլոր դեպքերում անհանգստացնում է հարցվածներին, իսկ նրանց 70%-ի կարծիքով էկոլոգիական անվտանգությունը կարևոր է և մնում է առաջնային մարդու կյանքի անվտանգության, առողջության և շրջակա միջավայրի՝ վտանգավոր նյութերով աղտոտման կարնխարգելման առումով:
- Բնակիչների զգոնությունը թուլացել է հանքավայրի՝ երկար տարիներ չաշխատելու հետևանքով, սակայն կարծում են, որ անգամ հանքի աշխատանքների երկար տարիներ դադարեցումից հետո էլ հանքավայրի լցակույտերից շարունակվում են փոշու արտանետումները:
- Հարցվածները կարծում են, որ հանքավայրի շահագործման ենթակառուցվածքների անվտանգությունը ներկայումս վտանգված չէ, սակայն հնարավոր վերաշահագործման պարագայում պարտադիր է դրանց անվտանգության երաշխիքների ապահովումը:
- Համայնքը խիստ կարիք ունի առաջին անհրաժեշտության սարքավորումներով և մասնագետներով համալրված բժշկական հաստատության, քանի որ մոտակա բուժհաստատություններ դիմելու համար բացակայում են տրանսպորտային երթուղիները, ճանապարհներն անբարեկարգ են, իսկ շտապօգնության բժշկական ծառայությունները շահառուների ահազանգերին արձագանքում են ուշացումներով:
- Արտակարգ իրավիճակներում քաղաքացիական բնակչության անվտանգության ապահովման օբյեկտների՝ թաքստոցների, ապաստարանների համար նախատեսված դպրոցի 700քմ մակերեսով ապաստարանը վերակառուցվել է վերջին շրջանում: Այդ նպատակի համար նախատեսված բնակելի տարածքների նկուղները չեն կարող ծառայել իրենց նպատակին, քանի որ դրանք զբաղված են կենցաղային իրերով, չունեն որևէ կոմունիկացիա: Համայնքում խիստ անհրաժեշտ է պատսպարման օբյեկտների կառուցումը:

- Հետագայում հանքարդյունահանման պարագայում առաջարկվեց հանքավայրը շահագործող ընկերության և համայնքի միջև ստեղծել բաց հարթակ՝ կազմակերպել քննարկումներ, որը կապահովի հանքավայրի շահագործման գործընթացների թափանցիկությունը, ազդակիր համայնքի նկատմամբ ընկերության հաշվետվողականության բարձրացումը:

10. Եզրակացություն

1. Շահագործման թույլտվություն ստանալուց հետո երկար տարիներ Ընկերությունն արդյունահանման աշխատանքներ չի կատարել՝ չապահովելով Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքով սահմանվող ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործումը, խախտելով Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին 6-րդ մասի պահանջները:
2. Ընկերությունը բնապահպանական և բնօգտագործման հարկեր չի հաշվարկել և չի մուծել, հողի հարկ չի մուծել՝ խախտելով Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 69-րդ հոդվածի և ընդերքօգտագործման պայմանագրի պահանջները: Այսինքն, իր անգործության հետևանքով բացասական ազդեցություն է թողել ՀՀ պետական և համայնքային բյուջեների կանխատեսումների գործընթացի վրա:
3. Ընդերքօգտագործման պայմանագիր կնքելիս՝ համայնքը չի ներգրավվել Ընկերության սոցիալական պատասխանատվության հարցերի քննարկման գործընթացին և չի արտահայտել իր դիրքորոշումը պայմանագրի կնքման ժամանակ:
4. 28.12.2012թ. ՊՎ-184 ընդերքօգտագործման պայմանագիրը կնքվել է Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 54-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի պահանջների խախտմամբ. այն չունի համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունների չափի և կատարման ժամկետների վերաբերյալ դրույթներ, ինչպես նաև պայմանագրում չեն ամրագրվել հանքի փակման միջոցառումների և հանքի փակման ծրագրի իրականացման ֆինանսական երաշխիքների մասին բաժինը, ինչը ՀՀ կառավարության 2012 թվականի մարտի 22-ի N 437-Ն որոշման պահանջների խախտում է: Ընդերքօգտագործման հայտի քննարկման գործընթացում չի պահանջվել հանքի փակման ծրագիրը, ինչը Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի գ) ենթակետի խախտում է:
5. Ընկերությունը չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պահանջների կատարումը:
6. Ընկերությունը չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար նախատեսված վճարի վճարումը՝ խախտելով Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի և ընդերքօգտագործման պայմանագրի պահանջները:

7. Այս Ընկերության, ինչպես նաև մի քանի այլ ընկերությունների համար օգտակար հանաձոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման համար վճար ՀՀ բնապահպանության նախարարության կողմից չի սահմանվել, ինչը ՀՀ կառավարության 2013 թվականի հունվարի 10-ի «Օգտակար հանաձոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգը սահմանելու մասին» N 22-Ն որոշման պահանջների խախտում է:
8. Ընկերությունն իր գործունեության ընթացքում չի ապահովել աշխատանքների և իրագործվող ծրագրի թափանցիկությունն ազդակիր համայնքի և շահագրգիռ հասարակայնության առաջ:
9. ԱՃԹՆ համակարգն ունի պատկան մարմինների և Ընդերքօգտագործողների հաշվետվությունների տվյալների հավաստիության և համադրելիության ճշգրտման խնդիր:

Սույն հաշվետվությունը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով: Այստեղ արտահայտված տեսակետները /կամ նյութի բովանդակությունը/ միմիայն հեղինակներինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները: